ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

<<----->> փետրվարի 2012թ. N—— -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետով, հաշվի առնելով <<Սամարտ>> ՍՊԸ-ի առաջարկը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝

1) Երևան քաղաքի Աբովյան պուրակին հարակից հատվածում <<Սամարտ>> ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 06.05.2003թ. հ.1019368 վկայական) 970.0քմ մակերեսով հողամասից 349.28քմ մակերեսով հատվածը Երևան համայնքի սեփականություն հանդիսացող հարակից 349.28քմ մակերեսով համարժեք հողամասի հետ փոխանակելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>>
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևանի ճարտարապետների միությունում 27.12.2011թ. տեղի ունեցած հասարակական քննարկման արդյունքում հավանություն է տրվել Աբովյան հրապարակին հարող զբոսայգու տարածքում <<Հրանտ Մաթևոսյան>> մշակութային կենտրոնի կառուցման նպատակահարմարությանը:

Մշակութային կենտրոնի կառուցման համար առաջարկվող՝ Աբովյան պուրակին հարող զբոսայգում գտնվող 360.0քմ մակերեսով հողամասի 349.28քմ մակերեսով հատվածը համադրվում է <<Սամարտ>> ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 06.05.2003թ. հ.1019368 վկայական) 970.0քմ մակերեսով հողամասի 349.28քմ մակերեսով հատվածի հետ:

<<Սամարտ>> ՍՊԸ-ն նշված հողամասերի փոխանակության վերաբերյալ գրավոր ներկայացրել է իր համաձայնությունը:

Վերոհիշյալ հասցեում գտնվող 349.28քմ մակերեսով հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1), 2), 3) ենթակետերի պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում:

Ելնելով վերոգրյալից՝ <<Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին>> Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է հարցի կարգավորման անհրաժեշտությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին>> որոշման նախագծի ընդունման առնչությամբ առաջանում է Երևան քաղաքի ավագանու որոշման կատարումն ապահովելու մասին Երևանի քաղաքապետի որոշման ընդունման անհրաժեշտություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին>> որոշման նախագծի ընդունման առնչությամբ Երևան համայնքի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ